



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
«ԱՐԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ»



Ա. Միլասյան Ա. ՄԻԼԱՍՅԱՆ

«17» 05 2017թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 47

Ձեռնարկողը՝

«Ճաննախագիծ» ինստիտուտ *ՍՊԸ*
Ք. Երևան, Աճառյան 54Բ

Գործունեությունը՝

«Գառնիի քարերի սիմֆոնիայի մուտեցնող» և «Խոսրովի անրառ» պեպրական արգելոցի այցելուների կենտրոնից դեպի Գառնիի քարերի սիմֆոնիա տանող ճանապարհների վերականգնման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվեպնություն
«Կուրայրի մարզ»

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈՒԿԻ-ի տնօրեն՝



Վ. Սահակյան
Վ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԸՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԸՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 47

«17» 05 2017թ.

<<Գառնիի քարերի սիմֆոնիային մոտեցնող>> և <<Խոսքովի անտառ>> պետական արգելոցի այցելուների կենտրոնից դեպի Գառնիի քարերի սիմֆոնիա տանող գործող ճանապարհների վերականգնման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	<<Ճաննախագիծ>> ինստիտուտ ՄՊԸ
Նախագծողներ՝	<<Ճաննախագիծ>> ինստիտուտ ՄՊԸ
Ներկայացված նյութեր՝	Աշխատանքային նախագիծ, ՇՄԱԳ հաշվետվություն
Տեղադրման վայրը՝	ՀՀ Կոտայքի մարզ



Համաձայն ներկայացված աշխատանքային նախագծի Գառնիի քարերի սիմֆոնիային մոտեցնող ճանապարհի առաջին 495մ-ը ,նաև դեպի Մարգապետունու և Ալեքյան փողոցներ տանող հատվածները անցնում են Գառնի գյուղի միջով և երկու կողմից կառուցապատված են: Տվյալ հատվածում ճանապարհային պատվածքը ամբողջովին քայքայված է և պետք է վերակառուցվի: Բացակայում են նաև ջրահեռացման համակարգը, մայթերը և ճանապարհային լուսավորությունը:

Մերձճանապարհային տների մուտքերի և դարպասների նիշերը անկանոն են, ինչը դժվարեցնում է երկայնական և լայնական թեքությունների սահուն իրականացմանը:

Գոյություն ունեցող ճանապարհի լայնությունը փոփոխական է: Ճանապարհի Կմ0+495-ում առկա է Y-աձև հատում, որտեղ երթևեկելի մասը շատ նեղ է և սահմանափակված է մասնավոր հողատարածքով և շինությամբ: Տվյալ հատվածում պահպանվել է գոյություն ունեցող օտարման սահմանները և ճանապարհի լայնությունը:

Տվյալ հատվածում նախագծով նախատեսված է ա/բ ծածկ և լուսավորություն: Միաժամանակ նախատեսված է նաև համայնքի ջրամատակարարման ջրագծի(որը գտնվում է վթարային վիճակում), հին խողովակների փոխարինում նոր պոլիէթիլենային խողովակներով:

Բաժանորդների միացումները հիմնական խողովակաշարին կիրականացվի համայնքի աջակցությամբ:

*Արցախ ՅԵԿ 9/17/2017
17.05.2017թ*

Կմ 0+301-ում ձախ կողմում գտնվում է Մաշտոց Հայրապետ եկեղեցին: Նախագծով նախատեսված է դեպի այդ եկեղեցի մուտքի բարեկարգում սալարկումով, ինչպես նաև քարե շարվածքով հենապատերի կառուցում:

Դեպի Մարգալետունու փողոց տանող հատվածի կմ 0+195-ում ձախ կողմում գտնվող քանդված եկեղեցու մուտքը նույնպես բարեկարգվել է սալարկումով:

Օրագծի սկզբից մինչև կմ 0+640-ն առկա է ոռոգման համակարգ (բաց և փակ), որը վերանորոգման և կանոնակարգվելու կարիք ունի:

Նախագծով նախատեսված է ե/բետոնե, ծածկասալով վաբերի կառուցում, որոնք միաժամանակ կձառայեն որպես մայթ: Վաքի և գոյություն ունեցող պարիսպների միջև տեղ-տեղ մնացող արանքը ասֆալտապատվում է որպես մայթ: Ներկայումս ջրահեռացումը կմ 0+426-ից կատարվում է մետաղական խողովակի միջոցով, որը մինչև 0+510 անցնում է ստորգետնյա, հետո ճանապարհի աջ եզրով՝ վերգետնյա: Նախագծով նախատեսված է այդ խողովակը փոխարինել պոլիէթիլենային խողովակով և անցկացնել ստորգետնյա մինչև կմ 0+636-ը:

Կմ 0+090-կմ 0+128 և կմ 0+498-կմ 0+511 հատվածներում նախատեսված է հենապատերի կառուցում:

Կմ 0+492-կմ 0+960 հատվածում ճանապարհի երկայնական թեքությունը կտրուկ մեծանում է և ճանապարհային պատվածքը սալարկված է բազալտե սալիկներով, որոնց վրա առկա են նստվածքներ և փոսեր: Տվյալ հատվածում նախատեսված է ապամոնտաժել և վերատեղադրել բազալտե սալարկումը՝ լրացումով, ինչպես նաև լայնացնել ճանապարհը: Սալարկման եզրին և 10մ հաճախականությամբ լայնական կտրվածքով նախատեսված են բետոնե շրջանակներ(պահանգներ):

Կմ 0+640-կմ 0+960 հատվածում ճանապարհի աջ կողմում առկա է առու, որի հունը կանոնակարգված չէ, իսկ ձախ կողմում առկա են ջրագծեր, որոնք տեղափոխման/վերատեղադրման կարիք ունեն:

Այս հատվածում ճանապարհից աջ գտնվող առվի հունը նախատեսված է ուղղել ճանապարհի և առվի միջև կառուցելով քարե ցածր հենապատ: Ճանապարհից ձախ և աջ գտնվող ջրամատակարարման ջրագծերը նախատեսված է վերատեղադրել խրամուղու մեջ՝ փոխարինելով մետաղական խողովակները պոլիէթիլենային խողովակներով:

Կմ 0+960-ում դեպի ձախ ճանապարհը տանում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի այցելուների կենտրոն, իսկ դեպի աջ շարունակվում է դեպի Գառնիի քարերի սիմֆոնիա մինչև կմ 1+600:

Այս խաչմերուկից դեպի «Խոսրովի անտառ» և Աղբյուրակապ գնացող ճանապարհներով անցնում են ջրամատակարարման խողովակներ, որոնք նույնպես փոխարինվում են պոլիէթիլենային խողովակներով և վերատեղադրվում խրամուղու մեջ:

Դեպի քարերի սիմֆոնիա գնացող հատվածում ճանապարհային պատվածքը ամբողջովին քայքայված է, իսկ հողային պաստառը ողողված: Այս հատվածում հողային պաստառում առկա են խմելու ջրի ինքնահոս խողովակներ, որոնք տեղափոխման կամ վերատեղադրման ենթակա չեն: Այս հատվածում նախատեսված է հողային պաստառի վերականգնում լիցքի իրականացումով, խմելու ջրի ջրագծերի մերկացած մակերեսների մաքրում և բիտումապատում պահպանելով ջրագծերը հողային պաստառի սահմաններում:

Այս տեղամասում (Քարերի սիմֆոնիայի հատված) ճանապարհային պատվածքը նույնպես նախատեսված է սալարկում բազալտե սալիկներով:

Ճանապարհի ջրահեռացումը իրականացվում է դեպի գետը ուղղված միաթեք սալարկումով, իսկ լանջի կողմից հավաքվող մակերեսային ջրերը կհեռացվեն կողային առուների և արհեստական կառուցվածքների միջոցով:

Անվտանգության նկատառումներից ելնելով ձախ կողմում նախատեսված է քարե շարվածքով պարապետներ, իսկ ճանապարհի շեպի կայունության և գետի կողմից ողողումից պաշտպանելու համար նախատեսված են գաբիոնե հենապատեր:

Նախատեսվող ավտոճանապահի կառուցման աշխատանքների իրականացման ընթացքում արտանետումները առաջանում են հողային աշխատանքների, շինարարական տեխնիկայի աշխատանքի, ասֆալտապատման և այլ աշխատանքների արդյունքում:

Հնարավոր անբարենպաստ ազդեցությունների զգալի մասը կդիտարկվի շինարարական/վերականգնման աշխատանքների իրականացման ընթացքում և տեղի կունենա ճանապարհային միջանցքում աշխատանքների իրականացման ժամանակ:

Ընդհանուր առմամբ հնարավոր բացասական բնապահպանական ազդեցությունները, որոնք պայմանավորված են գոյություն ունեցող ճանապարհի վերականգնման աշխատանքներով՝ ակնկալվում է, որ կլինեն փոքրածավալ, կարճաժամկետ և տեղայնացված:

Գոյություն ունեցող ճանապարհի վերականգնման աշխատանքների արդյունքում կենսաբազմազանության վրա հիմնականում ազդեցություններ չեն ակնկալվում, քանի որ ճանապարհը կառուցվել և շահագործվել է մի քանի տասնամյակներ շարունակ և այդ ընթացքում էկոհամակարգերը զգալի վերափոխվել և ենթարկվել են նշանակալի անտրոպոգեն ազդեցությունների:

Ծրագրի իրականացման արդյունքում հնագիտական կամ մշակութային ուեսուրսների հայտնաբերում չի ակնկալվում, քանի որ հիմնականում նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող ենթակառուցվածքների վերականգնում, որտեղ պեղումները վաղուց կատարվել են և հայտնաբերված գտածոների մասին ոչինչ չի նշվել:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է՝

- պարսպապատել շինարարական հրապարակները,
- շինհրապարակից դուրս եկող մեքենանարի անվադողերը լվանալ,
- պարտադիր կարգով ավազը ցեմենտը, գաջը, խիճը և շինարարական աղբը տեղափոխել անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով,
- շինհրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել,
- սորուն նյութերը (ավազ, գաջ, ցեմենտ) պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,
- շինարարական աղբը տեղափոխել միայն հատկացված վայրեր,
- խնամքով վերաբերվել ծառերին և թփերին:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության հաշվետվությունում ներկայացված է նախատեսվող գործունեության շրջակա միջավայրին հասցվող հնարավոր տնտեսական վնասի գնահատումները, ազդեցության մշտադիտարկման ծրագիրը, ազդեցության բացառմանը և նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումները:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո կիրականացվեն տարածքի մաքրման և բարեկարգման աշխատանքներ, իսկ շինարարությունից առաջացած թափոնները համայնքի հետ համաձայնեցումից հետո կտեղափոխվեն աղբավայր:

Եզրահանգում՝ Նախատեսվող գործունեության հիմնական ազդեցությունը պայմանավորված է շինարարության փուլով, ինչը չունի զգալի ազդեցություն և կրում է ժամանակավոր բնույթ: Ազդակիր համայնքում իրականացվել է չորս հասարակական լսումներ, որոնց արդյունքում կազմված արձանագրություններով համայնքը և մասնակիցները նախատեսվող գործունեության իրականացմանը տվել են իրենց հավանությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Ճաննախագիծ>> ինստիտուտ ՄՊԸ կողմից ներկայացված <<Գառնիի քարերի սիմֆոնիային մոտեցնող>> և <<Խոսրովի անտառ>> պետական արգելոցի այցելուների կենտրոնից դեպի Գառնիի քարերի սիմֆոնիա տանող գործող ճանապարհների վերականգնման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն:

Մասնագետ՝



Ա. Մինասյան